

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորանքի խոսքը՝ մայիսի 9-ի առթիվ

Սիրելի՛ հայրենակիցներ

Հայրենական մեծ պատերազմի և Արցախյան ազատամարտի վետերաններին և բոլորիս շնորհավորում եմ 1945 թվականի հաղթանակի և Շուշիի ազատագրման օրվա՝ Մայիսի 9-ի՝ Հաղթանակի և խաղաղության տոնի կապակցությամբ: Մեծ հայրենականում մեր հայրենակիցների սիրանքներն էին և չարիքի, ազգայնականության դեմ պայքարը, որ դաստիարակեցին մեր հետագա սերունդներին, և արդեն նորանկախ Հայաստանում մեզ նոր մայիսյան հաղթանակներ բերեցին: Խոնարհումս Երկրորդ աշխարհամարտում, և Արցախյան ազատամարտում հայրենիքի համար իրենց կյանքը զոհաբերած մարտիկներին, հավերժ փա՛ռք նրանց հերոսացած անուններին: Այսօր էլ նրանց որդիներն ու թոռները կանգնած են հայրենիքի սահմաններին և քաջաբար պայքարում են հանուն Արցախի և Հայաստանի Հանրապետության անվտանգ և խաղաղ գալիքի, հանուն մեր երկրի գոյության ու հզորացման: Մայիսի 9-ի նվիրական հիշատակներն ու հաղթանակները միշտ պիտի զորացնեն մեզ, քաջալերեն դիմակայելու ծանր իրավիճակներին: Սիրե՛նք, փայփայե՛նք այսքան դժվարությամբ մեզ տրված հայրենիքը և մեր ջանքով ու ստեղծագործ արարմունքով շենացնենք այն՝ ամեն պահ պատրաստ լինելով դառնալ նրա զինվորը: Բոլորիդ մաղթում եմ առողջություն, անամպ երկինք, մեր հայրենիքին՝ խաղաղ լուսաբացներ և մայրամուտներ, մեր զինվորներին՝ անկոտրում կամք, մարտական աննկուն ոգի և անփորձանք ծառայություն